State of California-Health and Human Services Agency

Department of Health Care Services

TOBY DOUGLAS
Director

EDMUND G. BROWN JR.
Governor

Հարգելի ծնող կամ խնամակալ

Sacramento County-ում «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրի մինչև 21 տարեկան անդամների մեծ մասից պահանջվում է ատամնաբուժական սպասարկում ստանալ կառավարվող բուժսպասարկման որևէ ատամնաբուժական ծրագրի միջոցով:

Որպեսզի ատամնաբուժական օգնության կարիք ունեցող մինչև 21 տարեկան անձինք կարողանան *ժամանակին* սպասարկում ստանալ ատամնաբույժի մոտ, «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման ատամնաբուժական ծրագրի անդամները կարող են դիմել սովորական «Medi-Cal»-ի «վճարում սպասարկման դիմաց» ատամնաբուժական ծրագիր փոխադրվելու համար, որը հայտնի է նաև «Denti-Cal» անունով: Այս նոր ընթացակարգը կոչվելու է «*Beneficiary Dental Exception*» *(BDE)*: Կից ուղարկվում են հայցադիմումը և այն լրացնելու ցուցումները:

Ես համապատասխանու՞մ եմ BDE ստանալու պահանջներին

Եթե Դուք գտնվում եք ստորև նշված իրավիճակներից որևէ մեկում, ապա ատամնաբուժական ծառայություններ ստանալու համար կարող եք «Denti-Cal» փոխադրվել, եթե Ձեզ չի հաջողվում՝

- «շտապ օգնության» (ցավի, այտուցման և/կամ արյունահոսության դեպքում) ժամադրություն ստանալ 24 ժամվա ընթացքում.
- «հրատապ օգնության» ժամադրություն ստանալ 72 ժամվա ընթացքում.
- «ընթացիկ» (ոչ-հրատապ) ժամադրություն ստանալ չորս (4) շաբաթվա ընթացքում կամ
- «մասնագետի մոտ» ժամադրություն ստանալ Ձեր դիմումի արտոնումից հետո 30 օրվա ընթացքում:

Ի՞նչ պետք է ես անեմ

1. Եթե Դուք դժվարություն ունեք ժամադրություն ստանալու հարցում, ինչպես նշված է վերը, խնդրում ենք լրացնել BDE-ի հայցադիմումը և փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ուղարկել հայցադիմումի մեջ նշված հասցեով կամ զանգահարել «Dental Managed Care»՝ 1 (855) 347-3310 անվճար հեռախոսահամարով:
2. Եթե Դուք փոստով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ուղարկեք BDE-ի հայցադիմումը, «Medi-Cal»-ի ատամնաբուժական ծրագրի աշխատակիցներից մեկը կզանգահարի Ձեզ և կտեղեկանա Ձեր երեխայի կարիքների մասին: Բացի այդ, նա կզանգահարի Ձեր ատամնաբուժական ծրագիր և կփորձի ժամադրություն ստանալ Ձեզ համար:
3. Հինգ (5) աշխատանքային օր անց, եթե Ձեր ատամնաբուժական ծրագիրը չկարողանա Ձեր երեխային անհրաժեշտ ատամնաբուժական օգնության համաձայն ժամադրություն տալ Ձեզ, ապա «Medi-Cal»-ը հավանություն կտա «Denti-Cal» փոխադրվելու Ձեր հայցին, Ձեզ հաստատման նամակ կուղարկի և կզանգահարի՝ փոփոխության մասին տեղեկացնելու համար:
4. «Denti-Cal» փոխադրվելուց հետո Դուք կարող եք ատամնաբույժ գտնել զանգահարելով 1-800-322-6384: «Denti-Cal»-ը Ձեզ կտա Ձեր տարածքում աշխատող երեք (3) ատամնաբույժների անունները, հեռախոսի համարները և հասցեները:
5. Ժամադրություն ստանալու համար Դուք Ինքներդ պետք է զանգահարեք ատամնաբույժին:

Հարցերի կամ մտահոգությունների դեպքում խնդրում ենք զանգահարել «Dental Managed Care»՝ 1-855-347-3310 անվճար հեռախոսահամարով: Ասացեք, որ զանգահարում եք «Sacramento Beneficiary Dental Exception»-ի ընթացակարգի կապակցությամբ:

Կարող եք նաև էլեկտրոնային ուղերձ ուղարկել՝ dentalmanagedcare@dhcs.ca.gov հասցեով:
«Ուղերձի նյութը» տողում պետք է նշել՝ Dental Managed Care BDE: